

ՍԵՒԱՆԱՅ ԼԻՃԸ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՅ

Հայաստանի օդերևութաբանության եւ դիտարկումի կեդրոնի տնօրէն Լեւոն Ազիզեան յայտնեց, որ Սեւանայ լիճին մակարդակը բարձրացած է 1900.80 մետրի, որ 2021-ի ՅՈ Յունիսէն ի վեր գրանցուած բարձրագոյն ցուցանիշն է: Անցեալ տարուայ նոյն օրուայ հետ համեմատած, լիճը աւելի բարձր է 14 սանթիմետրով, իսկ 2026-ի տարեսկիզբին հետ համեմատած՝ 58 սանթիմետրով:

ԱՌՆ. «ՊԱՏԵՐԱԶՍԸ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑ ԶԷ»

Հանրապետութեան նախագահ ժողգէ Լուս Պապատայի պալատին մէջ ընդունեց Միջին Արեւելքի մէջ ՄԱԿ-ի խաղաղապահ գործողութիւններու նախկին յանձնակատար Միկրիտ Զակը, որուն հետ քննարկեց տարածաշրջանային զարգացումները, ՄԱԿ-ին դերը եւ խաղաղութեան յանգելու միջոցները: Չրուակիցները խօսեցան միջազգային կազմակերպութեան կողմէ Լիբանանին տրամադրուող շարունակական օժանդակութեան, ինչպէս նաեւ խաղաղութիւն հաստատելու առումով նախագահ Լուսի ջանքերուն մասին: Զակ ողջունեց Լուսի ու Լիբանանի կառավարութեան բանակցային ջանքերը, շեշտելով լիբանանցի երիտասարդութեան ստեղծագործութեան համար յարմար միջավայր



ստեղծելու անհրաժեշտութիւնը: Լուս շեշտեց, թէ չ'ուզեր որ նոր սերունդը ապրի տառապանք եւ ցաւ, շեշտելով որ քաղաքական գործիչներուն պարտականութիւնն է անոնց համար ապահովել խաղաղ եւ կայուն միջավայր մը, որպէսզի չստիպուին արտագաղթելու: Անդրադառնալով իսրայելեան շարունակական ոտնձգութիւններուն, նախագահը յիշեցուց, որ այս ձեւը ապարդիւն է, ուստի խաղաղութեան յանգելու համար պէտք է նստիլ բանակցային սեղան եւ յանգիլ երկու կողմերը գոհացնող լուծումի: «Փորձը ցոյց կու տայ, թէ պատերազմները չեն առաջնորդեր խաղաղութեան եւ կայունութեան, ուստի Իսրայել պէտք է փոխէ իր մօտեցումը, եթէ կ'ուզէ իրապէս ապրիլ խաղաղ եւ կայուն միջավայրի մէջ», ըսաւ Լուս: Ան հաւաստիացուց, որ պիտի չիրաժարի հարաւեւ եւ կը վերյիշեցնէ, թէ Ուաշինկթընի մէջ ստորագրուած շրջանակային համաձայնագիրը կը պահանջէ Լիբանանի բոլոր շրջաններէն իսրայելեան ուժերուն նահանջը:

ՊԱՏԵՐԱԶՍԻ ՄԱՐԴԱՅԻՆ ՀԵՏԵԱՆՔՆԵՐԸ

Առողջապահութեան նախարարութեան արտակարգ իրավիճակներու գրասենեակը յայտարարեց, թէ 2 Մարտին սկսած իսրայելեան գործողութիւններուն հետեւանքով Լիբանանի մէջ ցարդ մահացած է 4322 մարդ, վիրաւորուած՝ 12.219 ուրիշներ: Բժիշկներու եւ հիւանդապահներու շարքերէն ինկած է առնուազն 5 զոհ եւ 147 վիրաւոր, իսկ շտապ օգնութեան խումբերէն՝ առնուազն 130 զոհ եւ 259 վիրաւոր

ԿԻՍԱԻԱՐՏԱԿԱՆԻ ԲԱՆԱՎԷՃ



Ֆուլթայլի աշխարհի ախոյեանութեան կիսաւարտական փուլին սպասուող Ֆրանսա ընդդէմ Սպանիոյ ծանրակշիռ ճակատումին նախօրէին, Սպանիոյ նախկին վարչապետ Մարիանօ Ռախոյ մարզաքաղաքական նոր բանավէճ մը հրահիւրեց, երբ կարծիք յայտնեց, թէ Ֆրանսայի հաւաքականին մէջ ֆրանսացի խաղացողներ չկան: El Debate պարբերականին համար գրած սիւնակին մէջ Ռախոյ յայտնեց, որ «Ֆրանսան ունի հիւսնալի խումբ մը, անոնք աշխարհի կրկնակի ախոյեան են, շատ լաւ կը խաղան, սակայն չունին ֆրանսացի խաղացողներ»: Ռախոյի խօսքերը դատապարտումի ալիք բարձրացուցին երկու երկիրներուն մէջ: Ընդդիմախօսները Ռախոյը մեղադրեցին խաղացողներուն մորթի գոյնին պատճառով անոնց ինքնութիւնը կասկածի տակ առնելու մէջ: Սպանիոյ վարչապետ Փետրօ Սանչէզ դժգոհեցաւ, թէ «որոշ մարդիկ մինչեւ օրս երկրին պատկանելիութիւնը կը չափեն մականունով, ծննդավայրով կամ մոյթի գոյնով, մինչ ուրիշներ այդ կը չափեն երկրին մէջ մեր արմատներով եւ ներդրումի ցանկութեամբ» ֆուլթայլ խաղալով, տարեցներուն հոգ տանելով կամ առեւտուր ընելով: Սպանիան կը պատկանի անոնց, որոնք կը սիրեն երկիրը եւ կ'աշխատին անոր համար», ըսաւ Սանչէզ: Ֆրանսայի ներքին գործերու նախարարը իր կարգին անընդունելի համարեց Սպանիոյ նախկին առաջնորդին խօսքերը, յիշեցնելով որ Ֆրանսան բազմազանութեան երկիր է, ուր իւրաքանչիւր անձ կրնայ գտնել իր տեղը:

ԻՐԱՆԸ ԴԱՐՁԵԱԼ ՊԱՇԱՐԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄ

Միացեալ Նահանգներու նախագահ Տոնըլտ Թրամփ շեշտեց, որ ամերիկացիները անմիջապէս վերստին պիտի պաշարեն Իրանը, պիտի տիրապետեն Հորմուզիս, պաշտպանեն Նաւարկութեան ուղիները եւ անոր դիմաց ստանան նիւթական եկամուտ: Իրանի Արտաքին գործերու նախարարութիւնը միւս կողմէ յայտարարեց, թէ Ուաշինկթընի հետ կնքուած յուշագիրը կը բոլորէ ճգնաժամային փուլ մը: Ըստ Թեհրանի, ամերիկեան վերջին հարուածները տապալած են անցնող քանի մը ամիսներու դիւանագի-



տական ջանքերը: Հորմուզի նեղուցէն անցնող նաւերուն վրայ կրակ բանալու ամբաստանութեամբ, ամերիկեան ուժերը հարուածներ տուին Իրանի հրթիռային եւ հակաօդային պաշտպանութեան համակարգերուն՝ նեղուցին մերձակայ շրջաններուն եւ Շոցի Իրանի պատկանող կղզիներուն մէջ: Իրանի յեղափոխական պահակագունդ յայտարարեց, թէ շարունակած է «Վրէժխնդրութեան գործողութեան» փուլերը եւ թիրախաւորած Պահիլէյի, Զուէյթի եւ Յորդանանի մէջ տեղակայուած ամերիկեան ուժերուն կեդրոնները, կործանելով հեռահար հրթիռային կայանքներ: Նախապէս, միջնորդ պետութիւններէն Օմանի իշխանութիւնները կանչած էին Մասքաթի մէջ Իրանի դեսպանը եւ անոր յանձնած բողոքի յուշագիր՝ երկրին մէջ իրանեան անօդաչու սարքի հարուածներու լոյսին տակ: Շոցի արաբական երկիրներուն դէմ Իրանի գործողութիւնները դատապարտած էին նաեւ Սեւոտական Արաբիան ու Զաթարը, զգուշացնելով այդ արարքներուն վտանգաւոր հետեւանքներէն: Հրաձգութեան փոխանկումի լոյսին տակ, Իրանի յեղափոխական պահակագունդը անժամկէտ փակ յայտարարեց Հորմուզի նեղուցը, իսկ ամերիկեան զինուած ուժերուն կեդրոնական հրամանատարութիւնը յայտարարեց, թէ Հորմուզը բաց կը մնայ բոլոր նաւերուն համար, որոնք ունին միջազգային ջրային ուղիով անցնելու օրինական իրաւունք:

ՀՈՈՄԻ ՊԱՊԵՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿՈՉ

Հռոմի Լեւոն ԺԴ. պապը մտահոգութիւն յայտնեց աշխարհի մէջ զինուած հակամարտութիւններու աճին առնչութեամբ եւ կոչ ուղղեց շարունակելու լուծումներ որոնել՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՌԵԼԱՆԻԹԻ «ՅՈՒՍԱԼԻ ԳՈՐԾԸՆԿԵՐԸ»

Ատրպէյճանի նախագահ Իլիւհմ Ալիւ յայտնեց, որ Ատրպէյճանի ինքնիշխանութեան վերականգնումը, Հայաստանի եւրոպական ձգտումները եւ անոնց առնչուած քաղաքական փոփոխութիւնները գործիչներէն եւ քաղաքական վերլուծաբաններէն կը պահանջեն նոր մօտեցում ցուցաբերել տարածաշրջանին նկատմամբ: Ընշի մէջ գումարուած լրատուամիջոցներու համաժողովի ընթացքին Ատրպէյճանի նախագահը յայտնեց, որ Պաքո կը քննարկէ Եւրոպայի խորհուրդէն դուրս գալու հնարաւորութիւնը: Ալիւ Նշեց, որ վառելանիւթի մատակարարումներուն հար-



ցով Հայաստան կ'ապաւինի այնպիսի յուսալի գործընկերոջ, ինչպիսին Ատրպէյճանն է: Անդրադառնալով հայատրպէյճանական բանակցութիւններուն մէջ ամերիկեան դերակատարութեան, նախագահը դիտել տուաւ, որ ամերիկացիները հաշուի կ'առնէին Պաքոյի մտահոգութիւնները եւ կ'ըմբռնէին «Չանգեզուրի միջանցքին» կարելորութիւնը: Ալիւն մաղթեց, որ տարածաշրջանային «3+3» ձեւաչափը դառնայ հաւասար իրաւունքներով վեցակողմ համագործակցութիւն: Նշեց, որ Նշեալ ձեւաչափին մաս կը կազմեն Հայաստանը, Ատրպէյճանն ու Հրաստանը, ինչպէս նաեւ Ռուսիան, Իրանն ու Թուրքիան, թէւ Թիֆլիս գրեթէ միշտ բացակայած է Նիստերէն եւ ինքզինք չէ համարած որպէս այս ձեւաչափի մասնիկ:Ատրպէյճանի լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Ատրպէյճանէն տարանցումով Ռուսիայէն Հայաստան փոխադրուած է 490 թոն ցորենի բեռ:



երկխօսութեան ու դիւանագիտութեան միջոցաւ: Պապը պահանջեց թոյլ չտալ, որ հակամարտութիւնները ոչնչացնեն խաղաղութեան յոյսը:

ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ԽՈՐՀՐԱՐԱՐԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏ

Կիրակի օր, Դամասկոսի մէջ իր անդրանիկ Նիստը գումարեց Սուրիոյ անցումային խորհրդարանը, որուն պարտականութիւնն է մշակել երկրին նոր սահմանադրութիւնը եւ ժողովրդավարական վարչակարգի հիմքերը: Անցումային խորհրդարանին երկու երրորդը Նշանակուած է տեղական յատուկ կոմիտէներուն առաջարկով, իսկ մէկ երրորդը՝ 70



երեսփոխան Նշանակուած է երկրի նախագահ Ահմատ Շարաայի որոշումով: Անդրանիկ Նիստի բացումին, Շարաա իր արտասանած խօսքին մէջ երեսփոխաններուն կոչ ուղղեց դառնալու պատասխանատուութեան օրինակ, զարգացնելու երկխօսութեան մշակոյթը, օրէնքին գերակայութիւնը եւ պետական հաստատութիւններուն նկատմամբ յարգալից վերաբերմունքը:

ԶԱՅՆԵՐ ՊՈԼՍԷՆ

(արձագանգ թրքահայ կեանքի) - 3

ԲԱՆԿԱԼԹԸԻ (Պոլիս)

Միլիթարեան վարժարանի սրահին մէջ, 17 Յունիսին, տեղի ունեցած է շնորհահանդէս թուրք սինեմարուեստի եւ թատրոնի պատմութեան հետազօտիչ Պուրաք Սիւմէի հեղինակած «Թրքական շարժանկարի առաջին կին դերասանուհին՝ Ռոզալի Պելլեան եւ Ազգային Օսմանեան Օփերէթի խումբը» թրքալեզու գիրքին, որ լոյս ընծայուած է վերջերս Փարոս հրատարակչատունէն: Բացման խօսքով հանդէս եկած է Միլիթարեան վարժարանի մատակարար մարմնի աւտենապետ Ռաֆայէլ-ժողգէ Ալիք՝ հպանցիկ անդրադարձ մը կատարելով Միլիթարեաններու կրթական ու մշակութային դարաւոր առաքելութեան: Յետոյ խօսք առած է «Փարոս» ամսագրի (թրքալեզու) տնօրէնուհի Մայտա Սարիս, որ բացատրութիւններ տուած է հատորին պատրաստութեան ու տպագրութեան մասին: Ան ըսած է, որ նորատիպ գիրքը միայն Ռ. Պելլեանի կեանքը չի լուսաբաներ, այլեւ լոյս կը սփռէ օսմանեան թատրոնի ու սինեմայի վաղ շրջանի պատմութեան վրայ: Մ. Սարիս այնուհետեւ մէկ առ մէկ ծանօթացուցած է օրուան բանախօսները ու բեմը թողած անոնք: Երեք բանախօսները՝ Պուրաք Սիւմէ (հեղինակը), Պօղոս Զալկըճըճօլլու եւ Փընար Զեքիրկէ մէջընդմէջ անդրադարձումներ ունեցած են Ռոզալի Պելլեանի բեմական գործունեութեան մասին, մինչ պաստառի վրայ ցուցադրուած են առնչակից արխիւային լուսանկարներ, թատերական տպաւորիչ ազդեր ու Ժժ. դարու մամուլի հրապարակումներ: Այս եռաձայն գրոյցը վարած ու համարած է Մարալ Ֆուքս: Երեկոյթի ընթացքին հնամենի «կրոմֆոն»-ի վրայ ունկնդրուած են Պելլեանի ծայնով պահպանուած կատարումներէ հատուածներ: Զեռնարկի աւարտին կատարուած է հիւրասիրութիւն:

(Շարունակութիւնը տեսնել էջ 2)



